

Խմբագրական

ՄՏԱԲԵՐԵԼՈՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԲԱԶԵՐՈՒՆ ՅԱՆԴՉՆՈՒԹԻՒՆԸ

Հայոց պատմության մեջ չորրորդ եւ հինգերորդ դարերուն է որ առաւելաբար ամրագրուած է մեր ազգային ինքնութիւնը: Կրօնքը, մշակոյթը, քաղաքական գարգացումներն ու պատերազմները ուրուագծած են դիմագիծը ազգի մը, որ ապրելով մէկտեղ հսկայ կայսրութիւններով շրջապատուած աշխարհագրական տարածքի մը վրայ, անհամար գոհողութիւններու եւ խիզախումներու գնով յաջողած է պահել իր իւրայատկութիւնը՝ յանդգնելով նոյնիսկ կռիւ մղել զինք քանակով գերազանցող ուժերու դէմ:

Եթէ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակումը մեր հաւատքին ու բարոյական արժէքներուն ամրագրումը հանդիսացաւ, գիրերու գիւտը մշակութային գարթօնքին ազդանը՝ շանը տուաւ, Վարդանանց պատերազմն ու Վահանեանց շարժումը մեր ժողովուրդին որպէս հայ ապրելու ու գարգանալու իրաւունքը նուաճեցին:

Այսօր, սակայն, գործնականապէս որքանով կը դրսեւորենք այդ յանդգնութիւնը մեր ինքնութեան պահպանման նուիրական առաքելութեան մէջ յատկապէս:

Պատերազմի դաշտերուն վրայ մեր զինուորները քաջաբար կը մարտնչին պահպանելու հողն ու ժողովուրդը, ցաւօք սակայն, նոյն յանդգնութիւնն ու վճռակամութիւնը չեն երեւիր մշակութային մեր կեանքին մէջ:

Լեզուի, մշակութային եւ կրօնական արժէքներու պահպանումի մեր ջանքերը խամրած են, դարձած մակերեսային, ձեւական, ժողովներու եւ հաղորդագրութիւններու սահմաններուն մէջ տատանուող: Այդ սահմանները պէտք է հատել անպայման ու գործի լծուիլ, հաւատքով եռուն գործի:

Մեր երիտասարդները հեռու կը մնան եկեղեցիէն, աստիճանաբար կը կորսնցնեն իրենց հետաքրքրութիւնն ու բժախընդրութիւնը հայ լեզուին ու մշակոյթին նկատմամբ (մեր խօսքը, հարկաւ, չի վերաբերիր այն բացառութիւններուն, որոնք ոգի ի բռին լծուած են մշակութային եւ ազգային արժէքներու պահպանման գործին):

Իսկ մենք յաճախ այս անկումը կը վերագրենք արտաքին պայմաններուն, առանց անդրադառնալու մեր իսկ անտարբերութեան, թերի աշխատանքին: Եթէ բաւարարուինք եղածը պահպանելու սահմանափակ ջանքերով ու արմատական փոփոխութիւններ կատարելու յանդգնութիւնը չունենանք, քարոզներու սահմանները հատած պիտի չըլլանք երբեք, ոչ ալ արժանի ժառանգորդները պիտի դառնանք Վարդանանց հերոսներուն:

Մշակութային մեր տեղատուութիւնը կասեցնելու, մեր երիտասարդութիւնը գործնականապէս հայ եկեղեցիին, հայ գիրքին, հայ գրականութեան ու մշակոյթին կառչած պահելու ժամանակակից միջոցներ գտնենք ուրեմն ու կեանքի կոչենք գաւառները:

21-րդ դարուն ընձեռած ծով կարելիութիւնները պիտի օգնեն մեզի, եթէ գտնուք օգտագործելու յանդգնութիւնն ու հայկական մեր կեանքին նոր որակ հաղորդելու ջանասիրութիւնը ունենանք:

«Գ.»

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՆԻՍՏԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ, Հինգշաբթի Ուրբաթ, 1-2 Փետրուար 2018-ին, Ազգային Կեղոնական Վարչութեան յաջորդական նիստեր տեղի ունեցան Անթիլիասի Մայրավանքէն Ներս:

- Համապարփակ քննարկումի ենթարկուեցան առաջին հերթին 2017-ին իրագործուած եւ 2018-ի նախահաշիւ պիտոճեն, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանին ընդհանուր նիւթական կացութիւնը: Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ շեշտեց, որ Կաթողիկոսարանին տնտեսական ընդհանուր կացութիւնը մնայուն հաշուեքննութեան ենթակայ է թէ՛ յանձնախումբին եւ թէ՛ հաշուեքննիչ ընկերութեան ճամբով: Հայրապետը միաժամանակ յիշեցուց, որ Կաթողիկոսարանին տնտեսական կարելիութիւնները սահմանափակ են եւ տարեկան պիտոճեական հսկայ բացեր կը գոյանան՝ մէկ կողմէ սղաճի, իսկ միւս կողմէ եկամուտի պակասի հետեւանքով:



- Վարչութիւնը, շարունակելով Ազգ. Ընդհանուր Ժողովին Նորին Սրբութեան պատգամին եւ ընդհանուր քննարկումներու ճամբով շեշտուած թեմերու վերակազմակերպումի հարցը, իր կարգին վեր առաւ յիշեալ ծրագիրին այժմեականութիւնը, եւ, Վեհափառ Հայրապետին առաջարկին հետեւելով, որոշեց յատուկ ժամանակացոյցի հիման վրայ հանդիպումներ կազմակերպել թեմերու հետ վերակազմակերպումի իրենց ծրագիրը քննարկելու համար:

- Կաթողիկոսարան-թեմ գործակցութիւնը դարձեալ շեշտուեցաւ. այս ծիրէն Ներս անդրադարձ եղաւ որոշ մարգերու, ուր թեմերու համարատուութիւնը Կաթողիկոսարանին հարկ է աւելի շեշտաւորել: Թէ՛ Կաթողիկոսարանին եւ թէ՛ կարգ մը թեմերու կապուած կանոնագրային հարցերու քննութիւնը աւելի արագացնելու համար յատուկ յանձնախումբ մը նշանակուեցաւ, որպէսզի յառաջիկային, Կրօնական ու Քաղաքական Ժողովներու մասնակցութեամբ, յիշեալ աշխատանքը իր աւարտին հասնի եւ ապա վաւերացուի Հայրապետին կողմէ:

- Վարչութիւնը յաջորդական հանդիպումներ ունեցաւ կալուածոց ու շահարկման յանձնախումբերուն հետ: Անոնք իրենց իրագործած աշխատանքներուն ամփոփ պատկերը ներկայացուցին թէ՛ շինարարական մարգէն Ներս եւ թէ՛ շահարկման ծրագիրներու գծով:

- Կաթողիկոսարանին առնչուած ընկերային ծառայութեան հաստատութիւններուն՝ Ազգ. Բուժարանի, Ազգ. Ծերանոցի ու «Թռչնոց Բոյն»-ի ինստիտուտները վերջին ամիսներու իրենց աշխատանքին արդիւնքը պարզեցին Ազգ. Կեդր. Վարչութեան, միաժամանակ տեղեակ պահելով հաստատութեան դիմագրաւած յատկապէս տնտեսական մտահոգութիւնները: Նորին Սրբութիւնն ու Վարչութիւնը յիշեցուցին մեր եկեղեցւոյ կողմէ կատարուող ընկերային ծառայութեան յոյժ կարեւորութիւնը եւ թելադրեցին, որ իրենց կարելիին կատարեն՝ օգտակար հանդիսանալու մեր ժողովուրդի կարիքներուն:

- Թուրքիոյ դէմ բացուած Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի դատը լայն քննարկումի ենթարկուեցաւ: Այս ուղղութեամբ տրուած բացատրութիւններու եւ վերջին շրջանին տեղի ունեցած գարգացումներու լոյսին տակ եւ հետեւելով Ազգ. Ընդհ. Ժողովի որոշման, ժողովականները շեշտեցին իրաւաքաղաքական բնոյթ ունեցող այս կարեւոր դատին առնչուած աշխատանքներուն շարունակութեան կարեւորութիւնը:

- Ժողովը նաեւ զբաղեցաւ անցեալէն եկող Ֆանարի ժողովրդային տուներուն առնչուած իրաւական աշխատանքները շարունակելու եւ յստակ ընթացքի մէջ դնելու անյետաձգելի հրամայականը: Ազգ. Կեդր. Վարչութեան մտահոգութիւնն է, որ հոն ապրող մեր ժողովուրդի գաւազները իրենց նիւթական պարտաւորութիւնը կատարելով եւ իրաւական անհրաժեշտ փաստաթուղթերը ունենալով տեր դառնան իրենց բնակարաններուն:

- Ազգ. Կեդր. Վարչութիւնը անհրաժեշտ նկատեց, որ շուրջ չորս տարիներ առաջ Արցախի մէջ հիմքը դրուած «Նոր Կիլիկիա» գիւղին ծրագիրը շարունակուի, յատկապէս մեր թեմերուն ու անհատ ազգայիններու մասնակցութեամբ:

- Համապարփակ կերպով զեկոյց տրուեցաւ Սուրիոյ հայութեան վերականգնումի ու օժանդակութեան աշխատանքներուն մասին: Վեհափառ Հայրապետն ու Ազգ. Կեդր. Վարչութիւնը կարեւորութեամբ շեշտեցին Սուրիոյ հայութեան վերակազմակերպման աշխատանքները որպէս համահայկական առաջնահերթութիւն:

- Վարչութիւնը նաեւ հանդիպումներ ունեցաւ Կաթողիկոսարանի մակաւարժական կեդրոնի ու հայագիտական դասընթացքի պատասխանատուներուն հետ եւ գոհունակութեամբ իմանալէ ետք կրթական այս երկու կառոյցներուն կողմէն տարուող գործունէութեան մասին, թելադրեց նոյն ոգիով շարունակել այս յոյժ կարեւոր աշխատանքը:

- Յատուկ անդրադարձ կատարուեցաւ արեւմտահայերէնի պաշտպանութեան ու գարգացման, ինչպէս նաեւ միացեալ ուղղագրութիւն մը ստեղծելու կարելիութեան շուրջ տարուող աշխատանքներուն: Այս գծով տրուած

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ



Sosha Shikhtyan-Savayakhtyan

Իրան կողմից Ռուսաստանի Դաշնությանը Ամրակողմի Ուղղորդմամբ Իր Ցարձակումը

Իրանի Արտաքին գործոց Նախարարության մամուլի խօսակա Պահրամ Ղասեմի կողմից Ռուսաստանի Դաշնությանը ուղղորդմամբ իր յարձակումը:




«Իրանի, Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ սուրիական հարցով երկխոսությունը կը շարունակուի», անվուց Ղասեմի:

Այնուհետեւ, Իրանի Արտաքին գործոց Նախարարությունը յայտարարեց. «Թուրքիա Աֆրիկի մէջ իր գործողութիւնները պէտք է դադարեցնէ»:

Նախորդ շաբթուան ընթացքին, թրքական բանակը յայտարարեց, որ Աֆրիկի մէջ «Ձիթենիի ճիւղ» գործողութեան ընթացքին 2 թուրք զինուորներ սպանուած են եւ 5 ուրիշներ վիրաւորուած:

Սուրիական աղբիւրներուն համաձայն, Աֆրիկի ուղղութեամբ Թուրքիոյ յարձակումին հետեւանքով մինչ օրս զոհուած են անելի քան 150 քաղաքացիներ:

արեւազալի այս աղօթքի վերջաւորութիւնները իրարու կը նմանեն՝ փոքրիկ տարբերութեամբ մը. առաջին համարին մէջ «որ ծագեաց զլոյսն արեգական» պէտք է որ ըլլար, իսկ երկրորդ համարին մէջ՝ «որ ծագեաց զլոյսն գիտութեան»: Ամէն անգամ ալ մէկը կը գտնուէր, որ «զլոյսն գիտութեան»ին տեղ մեքենաբար կը կրկնէր «զլոյսն արեգական», եւ միւսներուն արհամարհուտ ու յաղթական հայեացքին կ'արժանանար, կարծես ըսել կ'ուզէին, թէ՛



«ի՛նչ է, քունը դէռ զլո՛ւխդ է, չէ՞ս սթափած...», մինչդէռ յաջորդին, այդ յաղթական խումբին մէջէն մէկը անապայման նոյն ծուղակին մէջ կ'իյնար:

Չորեքշաբթի օրերը եկեղեցի ալ կ'երթային, որպէսզի արեւազալի ժամերգութեան ներկայ գտնուէին: Շատ կ'ուրախանայինք, որ դասէն փախուստ պիտի տայինք այդ պահուն: Մինչդէռ հիմա է որ կ'անդադանամ, թէ ինչքան տպաւորիչ եղած է այդ խորհրդաւոր արարողութիւնը, որ մինչեւ հիմա հետք ձգած է վրաս: Տպաւորուած եմ մանաւանդ «Լո՛յս, արարիչ լուսոյ» հոգեւոր երգով: Շատ կը փորձէի տան մէջ ես ալ երգել ու այնքան պէտք էր որ երկարէի «Լոյս»ին «ո՛ւ», որ մինչեւ բառը լման արտասանելու եղանակը հագար ու մէկ ձեւ կ'առնէր:

Ճեմարանի մէջ, Տէր Յուսիկ Աւագ Բահանայ Սեդրակեան սովորութիւն ըրած էր Ուրբաթ օրերը 10-րդ կարգի աշակերտներս Ս. Բանասից Մանկանց եկեղեցի հրաւիրել՝ Հսկումի արարողութեան ներկայ գտնուելու: Ներկայութիւնը պարտադիր էր, ան կը սաստեր ու կը սպառնար ցած կնիքը բացակայողին: Ես՝ վախկոտս, միշտ ներկայ կ'ըլլայի, որպէսզի ըլլայ թէ բացակայութեանս պատճառով կնիք ցած դէր ուսուցիչ-տերհայր: Եկեղեցին մէջ առջեւը կը նստէի, որպէսզի տերհայրը տեսնէր իմ ներկայ ըլլալս: Ան գլխու շարժումով մը հաւանութեան նշան կ'ընէր եկողներուն եւ այն ատեն միայն սիրտս կը հանգչէր, որ բացակայ պիտի չդրուէի: Եւ օր մըն ալ, ահա, ժամերգութեան պահուն, յանկարծ տեր հայրը աղօթագիրքը ձեռքս տալով նշան կ'ընէ,

Շար. 19 7 ➔



ԵՈՒՄԱՅԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ



Ուրբաթ, 2 Փետրուարին ՍՕԽաջի Շրջ. Վարչութեան Պատկազակցական յանձնախումբը հալէպահայ կիները հրաւիրած էր երկարամարտութեան օգտակարութեան ծանօթանալու մտերմիկ հանդիպումի մը:

Ձեռնարկը տեղի ունեցաւ ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս: Երկայի արուեստը մեկնաբանելու համար յանձնախումբը հրա-



առած է 5000 տարի առաջ: Այս մարզանքին համար անհրաժեշտ է չէր գործիքներ կամ ընդարձակ սրահներ, կրնանք կիրառել զայն որքան ժամու եւ որքան տեղ: Այնուհետեւ Կիրակոսեան ծանօթացուց օրուան դասախօս տիար Ռազէք Մալօս:

Ան աւարտած է Հալէպի գիւղատնտեսական համալսարանը ապա Լիբանանի Բապլիք համալսարանին մէջ մասնագիտացած է Երկայի մարզարուեստին մէջ:

Բացման խօսքէն ետք ներկաները հետաքրքրութեամբ ունկնդրեցին դասախօսին ներկայացուցած նիւթը: Անոնք հաւաքաբար գործադրեցին առաջարկուած մարզածները, որոնք օգտակար էին ողնաշարին, արեան շրջագայութեան, շնչառութեան, ջղային համակարգին եւ մաշկին:

Տիար Մալօ թելադրեց օրական քանի մը վայրկեան տրամադրել մեր մարմին, կատարել երկայի վարժութիւններ՝ կարգաւորելու մեր շնչառութիւնը եւ արեան շրջագայութիւնը, ձերբագատուելու համար մկանային պրկումներ եւ ցաւեր:

Ներկաները մեծ ոգեւորութեամբ հետեւեցան դասախօսութեան եւ առողջապահական գիտելիքներով հարստացած շնորհակալութիւն յայտնեցին կազմակերպիչ յանձնախումբին:

Աւարտին, յանձնախումբի ատենապետ Չեփիոն Մուղալեան դասախօսը պարգևատրեց հայկական ձեռագործով մը:

Թողակից



կիրած էր հմուտ մասնագետ տիար Ռազէք Մալօս:

Բացման խօսքով յանձնախումբի անդամ Շողիկ Շահինեան-Կիրակոսեան դիտել տուաւ, թէ մտքի եւ մարմնի առողջ հարգողակցութիւնը աշխուժացնող արդի մարզարուեստ մըն է երկան, որ կրնայ օգտակար դառնալ յատկապէս ընկճուածութեան, անձկութեան, գերյոզ-նաճութեան եւ գերճնշուածութեան պարագաներուն: Երկան սոսկ մարզանք չէ այլ մարմնի, հոգիի եւ ուղեղի ներդաշնակութիւնը պահող համակարգ մըն է, որ կը յարմարի բոլոր տարիքի մարդոց: Ան ծնունդ

ԻՆՉՈՒՄ Կ'ԱՌԱՐԿԵՆՔ



Կարո Արսենյան

Արամ Մանուկեանի յուշարձանի նախագծին շուրջ ծաւալող հրապարակային վեճը կը բխի բարոյական այն նորմերէն, որոնք կը սահմանեն եութիւնը հայ անկախ պետականութեան գաղափարին: Արամը Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր հայրը չէ միայն: Ան հարազատ խորհրդանիշն է բո-



լոր ժամանակներու մեր ինքնիշխան պետականութեան: Եւ ան վերջնական չափանիշն է, որմով պիտի չափուին բոլոր ներկայ եւ ապագայ սերունդները Հայրենիքի եւ Սփիւռքի մեր ղեկավարութեան եւ ժողովուրդին:

Հայ անկախ պետականութեան կենսագործունեութիւնը երբեք հեշտ պիտի չըլլայ: Ան պիտի ըլլայ փորձութիւններով ականուած ռազմադաշտ մը, ուր պիտի գործէ հայ ազգի խոհեմ, հեռատես, արդարակրող, յամառօրէն խստապահանջ, բայց նաեւ խիզախ եւ միշտ անըկուն եւ միշտ ինքնուրաց ղեկավարութիւնը իր յստակ տեսլականով եւ իր դժուարին ընտրութիւններով: Հայ անկախ պետականութեան մէջ տեղ չեն կրնար ունենալ միջակութիւնները: Հոն տեղ չկայ եսամոլութեան, շահամոլութեան, թուամորթութեան համար: Այնտեղ «ամեն օր եւ ամեն ժամ» պիտի գործուին «բազում գործք արութեան», ինչպէս կը պատգամէ Պատմահայրը: Անկախ պիտի ըլլայ արի մարդոց ռազմաբեմը, ուր շարունակ պիտի վճռուի մեր հաւաքական ճակատագիրը եւ ուր պիտի հրաշագործէ հայ մարդուն հանճարը:

Այս տեսլականն է, որ կեանքի կոչուեցաւ հարիւր տարի առաջ նուիրեալներու կորովի փառանգի մը արիւնով եւ քրտինքով եւ այդ դաժան երկունքէն ծնաւ նոր ժամանակներու մեր անկախութիւնը: Այդ գործին ռահվիրաները հայ յեղափոխական կուսակցութիւններն էին՝ Արմենական, Հնչակեան եւ մասնա-

ւանդ Դաշնակցական գործի հնոցները Զրիստափոր Միքայելեանի, Ռոստոմի, Սիմոն Չաւարեանի եւ այլ մեծերու հզօր իմացականութեամբ եւ վճռականութեամբ: Եւ յեղափոխական գործի այդ քուրայէն ազգի փրկութեան վճռական գործին կոչուած Արամն էր, որ պիտի յայտնուէր եւ հայ կեանքի ամենէն ճակատագրական օրերուն պիտի հրաշագործէր կեանքի ու մահուան երախէն կորուած մեր հսկայ յաղթանակը:

Կը սխալին բոլոր անոնք, որոնք այս ԱՐԱՄ իրողութեան մէջ կ'ուզեն տեսնել «անհատի պաշտամունք»: Բոլշեւիկեան այդ եզրերը մեզի համար չեն: Արամը վաղուց դադարած է անհատի նեղ սահմաններուն մէջ ապրելէ: Ան, ինչպէս իր գաղափարի ուսուցիչներն ու ընկերները, իր մեծ նուիրումի ճամբով վաղուց նոյնացած է մեր ազգային եւ համամարդկային տեսիլքին հաստատելով կեանքի այն չափանիշը, որ այսօր կը սահմանէ մեր հաւաքական արժեհամակարգը:

Այդ արժեհամակարգն է, որ պետք է ցուցաբերուի Արամի յուշարձանի յղացքին մէջ: Ծա՛նր պահանջ կը ղենք ձեր ուսերուն: Այդ, խիստ ծանր է մեր պահանջը: Զըն-նարկման ներկայացուած նախագիծերէն եւ ոչ մէկը (դատելով լուսանկարներէն) կը հատէ սահմանը: Արամը կը ներկայացնէ մեր հաւաքական խոյանքը եւ բոլոր այն յարգարժան քանդակագործները, որոնք պատրաստ են ստեղծագործական այս մեծ մարտահրաւերին, պիտի անպայման գոհացնեն այս դժուարահաճ պայմանը: Այս պայմանը բառերով չի բացատրուիր: Ոչ մենք եւ ոչ Երեւանի քաղաքապետութիւնը կրնայ այս խորհրդաւոր պայմանը բանաձեւել: Անկախ կը բխի հայ մարդուն վեցերորդ զգայարանը: Մի՛ հարցնէք մեզի, թէ ի՞նչ է ան: Երբ Երուանդ Զոչարը հպարտօրէն կանգնեց Սասունցի Դաւիթի հանճարեղ ձիարձանը, ոչ ո՛ք, բացարձակապէս ոչ ոք կը կասկածէր այդ կոթողի ինքնութեան: Մենք բոլորս աշխարհի չորս ծագերէն վերջնականօրէն համոզուած էինք, որ այդ իսկ էր Դաւիթը... Վարպետը «գիտէր», թէ ո՞վ էր մեր դիւցազնավէպին հերոսը, քանի որ գիտէր, թէ ո՞վ էնք մենք: Դուք նախ եւ առաջ պիտի գիտնաք, թէ ո՞վ է Արամը...

ԲԱՐԵՎԵՆԴԱՆ... Սկզբ՝ էջ 6

հասկնելով որ ասկէ վերջ եւ պիտի կարդամ: Ամօթաճուութենէս կաս-կարմիր կտրած ամբողջ եկեղեցիով մէկ ձայնս կը ձգեմ եւ միալար եղանակով, տողերու վերջերը երկարելով կ'ընթերցեմ, գոհունակ ձգելով դասատու-տերիայրս: Անկէ

ետք նստարաններուն ետեւը կը պահուողտէի, որպէսզի յանկարծ գիս նման անակնկալի դիմաց չընկնէր: Գեղեցիկ յուշեր, անհո՛գ օրեր: Բարեկենդան է: Թող բոլորին տունները բարիք ու ճոխութիւն բերէ, բերրի ու պտղալի ըլլայ տարին, իսկ պահքը՝ ընդունելի: «Բարի կենդանութիւն, անուշ անմահութիւն»:

Նշմար

ՄԵՐ ՔԱՂԱՔԻՆ ՏԵՐԵՐԸ

Յոգնեցայ ու քիչ մը հանգստանալու համար մայթին վրայի նստարանին նստայ, բայց յանկարծ ոտքի կանգնեցայ, վախնալով որ հիմա մէկը կը ծագի ու նստելավարձ կը պահանջէ ինձմէ:

Փառք Աստուծոյ, որ Երեւանի մէջ տակաւին կան բաներ, զորս կարելի է անվճար օգտագործել, ինչպէս փողոցներէն քալելը (քալելավարձ չկայ), այգիները, այգիներուն եւ մայթերուն նստարանները եւ կարգ մը ուրիշ բաներ, որովհետեւ քաղաքին մէջ ամեն ինչ դրամով է, ենթակայ օրինաւոր, կամ անօրէն վարձքերու:

Մայթերուն վրայ խանութներ ու կրպակներ, որոնք կը խանգարեն մարդոց անց ու դարձը, երբ այդ մայթերը ժողովուրդին հանգիստ անցումին պետք է ծառայեն: Գործարար մարդիկ կարողացեր են հաւանաբար քաղաքապետարանէն, դրամով կարգադրել այդ իրաւունքը: Նոյնն ալ բակերու եւ մուտքերու պարագային, դրամով բակերու մուտքին խանութ սարքելու արտօսութիւն ձեռք ձգած են, նոյնը ըրած են բակերուն մէջ երեխաներուն խաղավայրերու տարածքները փոքրացնելով:

Մայթերը, երբ պետութեան հակակշիռն տակ չեն, ունենան իրաւունք պետք է ունենայ իր մեքենան տեղաւորելու, սակայն քաղաքամէջի գլխաւոր փողոցներուն վրայ այդպէս չէ, մայթերը տեր ունին, չեն գիտեր ինչպէ՞ս, սակայն անոնք գործակալները հոն են, ինքնաշարժ տեղաւորել փափաքողին իրաւունք տալու, կամ չտալու եւ անշուշտ տեղադրող անձէն որոշ գումար մը գանձելով:



Սարեանի այգիին՝ Նկարիչներու «Վերնիսաժը» տեր ունի եւ ունենալ անձմար չի կըրնար ցուցադրել իր նկարները: Բուն Վերնիսաժի պարագան ուրիշ է, այնտեղ յատուկ սարքուած տարածք է եւ անշուշտ իրաւունք ունին վարձք գանձելու, սակայն այս մէկը բնական պարզ մըն է, որ գործարար մը քաղաքապետարանէն վարձած է ու ինք ալ իր կարգին ուրիշներու վարձու կու տայ:

Հանրակառքերն ու երթուղայինները աշխատելու իրաւունք ստանալու համար, իրենց երթուղիի տիրոջ վարձք վճարելու են, փողոցներն ալ տեր կ'ունենան... Անշուշտ, նոյնիսկ այդ փողոցներուն վրայ կանգնած մուրացկանները վարձք կը վճարեն... Ապշիլը քիչ է:

Այս եւ նման ապօրինի սովորութիւններ բոյն դրած են երկրին մէջ ու դժուար թէ փոխուին, այնքան ատեն որ սովորութիւն դարձած է որեւէ բան դրամով լուծել:

Անշուշտ Հայաստանը միակը չէ այսպիսի երեւոյթներու որպէս թատերաբեմ, շատ մը երկիրներու մէջ կաշառակերութիւնը եւ փտածութիւնը սովորական երեւոյթներ են, սակայն, կան նաեւ երկիրներ, որոնք յաջողած են այս վնասակար ախտը արմատախիլ ընել:

Հեռու չէրթանք, Հայաստանի դրկից Վրաստանի մէջ այս բոլոր յոռի երեւոյթները յաղթահարուած են: Հայաստանեան թերթէ մը իրագ եկ դարձայ, որ Վրաստանի նախկին նախագահ Սահակաշվիլին, իր նախագահութեան առաջին օրէն արգիլած է «Մաֆիոզներու» ապօրինի գործունեութիւնը եւ զիրենք վտարած է երկրէն, ինչպէս նաեւ արգիլած է կաշառք վճարելը, խստիւ պատիժի ենթարկելով օրինախախտները:

Վրաստան այցելողները կը վկայեն, որ իսկապէս կաշառակերութիւն չկայ այնտեղ, առաքինութիւն մը, որ կը նպաստէ երկրին բարգաւաճման եւ յառաջդիմութեան:

Մարդ պիտի հարց տայ թէ՛ ինչո՞ւ հոն եւ ոչ մեր մօտ: Պարզ է, հարցը նախ նիւթական է, կաշառք կ'առնէ իր նիւթական վիճակէն դժգոհ պաշտօնեան, բան մը, որ երբ շարունակուի, սովորութիւն կը դառնայ, եւ ամեն մարդ այդ միջոցին կը դիմէ: Ծիշո՞ղ է որ Վրաստանը Հայաստանէն անելի հարուստ երկիր է, սակայն եւ կը հաւատամ, որ Հայաստանի ներկայ պայմաններուն մէջ ալ այդ մէկը կարելի է, եթէ իսկապէս ազնիւ ու երկրին բարօրութեամբ մտաւոր ու սրտցաւ իշխանաւորներ ըլլան:

Յակոբ Միքայելեան

ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 235)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2			■			■					■	
3					■							
4			■	■		■	■	■	■			
5		■	■				■					
6				■		■	■			■		■
7									■			
8	■							■	■			
9												■
10			■	■	■	■	■					
11							■	■	■	■		
12		■										

Հորիզոնական

- 1- Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններէն: Չիւնուորական աստիճանաւոր:
- 2- Կրկնուած ձայնաւորներ: Յոգնակերտ մասնիկ: Իգական օտար անուն:
- 3- Թուր: Կերպաս:
- 4- Հակառակ՝ լեզուով մը այո: Հակառակ՝ հաստատական պատասխան:
- 5- Լիբանանէն բխող գետ մը: Խոհուն, ծանրաբարոյ:
- 6- Բայց:
- 7- Վարդանանց հերոսներուն ձօնուած շարական: Հոս:
- 8- Հակառակ՝ թերութիւն: Դատարկ:
- 9- Յակոբ Օշականի երկերէն:
- 10- Հակառակ՝ տարածքի միւտոր: Հակառակ՝ լուծուիլ:
- 11- Ծուլանալ:
- 12- Վարդանանց պատերազմի նահատակ հոգեւորականներու յիշատակի տօնը:

Ուղղահայեաց

- 1- 966-ին Աշոտ Գ. ողորմածի կողմէ հիմնուած վանական համալիր: Թռչուններու խումբ:
- 2- Հաշտ: Արագ վազել:
- 3- Հակառակ՝ խիստ: Հանքային համեմ:
- 4- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Ձի: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- 5- Իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ գործ, զբաղում: Երկինչիւն:
- 6- Հակառակ՝ օտար: Հակառակ՝ 630:
- 7- Առնչութիւն: Յետոյ:
- 8- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ ծուռ: Կրկնուած բաղձայններ:
- 9- Փոքր Մասիսի այլ անունը: Կրկնուած ձայնաւորներ:
- 10- Պատժել:
- 11- Տղամարդ: Եգիպտական անապատ:
- 12- 1911-1912-ին Կարնոյ մէջ Շաւարշ Միսաքեանի խմբագրութեամբ հրատարակուած թերթ: 4400: Նկանակ:

ԱԶԳԱՅԻՆ...

Սկիզբ՝ էջ 2

գեկոյցներու լոյսին տակ ժողովը կարեւորեց այս աշխատանքներուն ու յատկապէս յառաջիկայ ծրագիրներու իրագործման հրամայականը: - Ազգ. Կեդր. Վարչութեան նաեւ գեկոյց տրուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին առիթով Կաթողիկոսարանին տարած ու տանելիք աշխատանքներուն մասին, յատկապէս շեշտելով 20-23 Մարտ 2018-ին Անթիլիասի Մայրավանքէն ներս տեղի ունենալիք համագումարին եւ յուշակոթողի պաշտօնական բացումը:

տօնական բացումը:

- Վերոյիշեալ հարցերու քննարկումներուն ու ամնուած որոշումներուն առընթեր, ժողովը նաեւ զբաղեցաւ յարակից այլ հարցերով՝ միշտ շեշտելով Կաթողիկոսական երկու Աթոռներու, Հայաստան-Սփիւռք գործակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ մեր ժողովուրդին ներքին միասնականութիւնը առաւել ամրապնդելու անյետանձգելի հրամայականը:

Յայտնենք, որ Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական ու Զաղարկական ժողովներէն իւրաքանչիւրը կը բաղականայ 17 անդամներէ:

Պատրաստեց Մարինա Զիւլքըշեան-Պօղիկեան

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 235)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		8				5		6
					2		9	
1		6	4				8	
			8		4	3		2
3					5			1
4					9		6	
	6					4		
9	5		7		3		1	
		1				7		9

ՊԱՅՐՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 6)

Ստորեւ նշուած բանշարեղէններու եւ համեմներու անունները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 11 տառերէ բաղկացած օգտակար բանշարեղէն մըն է:

Ճ	բ	ո	ղ	կ	մ	ղ	ծ	կ	կ
ս	ա	խ	ա	ղ	ւ	է	ր	ո	ւ
պ	գ	կ	ո	կ	ո	ղ	ո	տ	ո
ա	բ	ի	ն	ս	դ	ք	տ	է	բ
ն	մ	ա	ն	ղ	ղ	ա	խ	մ	մ
ա	ա	կ	ա	ձ	է	տ	ս	կ	ս
խ	ղ	ս	տ	է	պ	ղ	ի	ն	ղ
յ	ա	լ	կ	ա	բ	լ	ա	ա	մ
բ	կ	ց	ր	ւ	ո	ղ	ա	ղ	ձ
ո	լ	ո	ո	լ	հ	ա	գ	ա	ր

ճակնդեղ - ստեպղին - բողկ - սմբուկ - լոլիկ - տաքդեղ - բակլայ - դդում - սպանախ - կաղամբ - հազար - սոխ - սխտոր - կոտեմ - ոլոռ - դաղձ - գինձ - ուրց - աղ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 234)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 234)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	պ	ա	ր	գ	ա	տ	ո	մ	ա	ր	լ
2	ա	ա	ա	ա	ի	ր	ա	ւ	ա	ա	ա
3	ն	օ	ս	ր	կ	ա	ր	ա	ս	ի	ա
4	ղ	ա	մ	մ	կ	ա	գ	տ	հ		
5	ո	թ	ի	խ				տ	ր	ա	
6	յ	ի	կ	ի	գ	ա	կ	է	տ	ս	ւ
7	ր			ք	ր	ք	ր	է	լ	ա	
8	վ	ա	հ	ա	ն	տ	է	ր	է	ա	ն
9	ն	կ		ր	շ	ա		ր	ւ	ա	
10	պ	ա	ր	ա	գ	ի	ծ	օ	ք	պ	
11	ա	հ	ա		ո	կ	է		տ	ա	
12	տ	տ	ա	շ	լ	ա	ս	տ	տ	տ	

7	1	8	4	6	5	9	3	2
9	2	6	3	8	1	5	7	4
4	5	3	2	7	9	8	1	6
2	7	1	6	5	3	4	8	9
3	8	4	1	9	2	6	5	7
6	9	5	8	4	7	1	2	3
5	4	9	7	2	8	3	6	1
1	6	7	5	3	4	2	9	8
8	3	2	9	1	6	7	4	5

ՊԱՅՐՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 5)

Պահուած բառը՝ Յուսարեր

Լաթաքիոյ «Գեղարդ» Պարսևուսի Հասիք Ելոյթը

Մշակոյթը ժողովուրդի մը ինքնութեան դրսեւորումն է, որ գայն կը զատորոշէ ուրիշներէն: Այդ դրսեւորման կարեւորագոյն եղանակներէն մէկն է պարը, որ իր մէջ կը բովանդակէ գայն ծնունդ տուող ու ներկայացնող ազգին պատմութիւնը իր անցեալով ու ներկայով, իր ձգտումներով ու երազանքներով, իր մաքառումներով ու յաղթանակներով:

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեղ. Ս. Շահան Սրբ. Արք. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Համազգայինի «Վահան

քելութիւնը նկատած է հայ մշակոյթի պահպանումն ու տարածումը, հայ ժողովուրդի գաւակներուն մէջ արթնցնելու սէր, հետաքրքրութիւն եւ գուրգուրանք հանդէպ մշակոյթին եւ որպէս անկորնչելի գանձ գայն փոխանցելու իրերայաջորդ սերունդներուն»:

Արաբերէն լեզուով խօսք արտասանեց Սարին Կիրակոսեան, որ հակիրճ ձեւով ներկայացուց հայկական պարը, ապա շնորհակալական խօսքը ուղղեց երկրի վսեմաշուք նախագահ Տոքթ. Պաշար Հաֆէզ ալ Ասա-



Նաասարդեան» Մասնաճիւղի Վարչութեան, Ուրբաթ, 26 Փետրուար 2018-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Լաթաքիոյ «Ասատ» մշակութային

տին, որ միշտ քաջալեր հանդիսացած է մեր մշակութային ձեռնարկներու իրագործման եւ դրուատիքով արտայայտուած ու գնահատած է գանոնք:

52 անդամներէ բաղկացած «Գեղարդ» պարախումբը համաչափ կըը-



կեղոնը թնդաց «Գեղարդ» պարախումբի գեղեցիկ պարերով, գեղարուեստական ղեկավարութեամբ Վրեժ Թերգեանի:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի Հանրապետութեան գոյգ քայլերգներով:

Ելոյթին ներկայ էին Հոգեշնորհ Տէր Թաթուլ Աբեղայ Գարտանաքեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը, Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի Տնօրէնութիւնը, Հոգաբարձական եւ Ուսուցչական կազմերը, ինչպէս նաեւ Լաթաքիոյ մէջ գործող միութիւններու ներկայացուցիչներ:

Սրահը ողողուած էր լաթաքիահայ համայնքի գաւակներով եւ հայկական պարարուեստը սիրող ու գնահատող օտար հիւրերով:

Հայերէն լեզուով բարի գալուստի խօսք արտասանեց Նայիրի Կարապետեան-Գաթրճեան ու ըսաւ. «Հայկական ազգային պարարուեստը ունի հազարամեակներու պատմութիւն, հայկական պարը հանդիսացած է մեր ժողովուրդի գեղագիտական վառ մտածողութեան արտայայտամիջոցներէն մէկը: Ան սերունդէ-սերունդ փոխանցուելէ եւ որոշ փոփոխութիւններու ենթարկուելէ ետք կրցած է պահել իր ինքնուրոյն դիմագիծը»:

Ան նկատել տուաւ նաեւ, թէ «90-ամեայ Համազգայինը իր հիմնադրութեան օրէն իսկ, գլխաւոր առա-



ջոյթներով, հեզաճկուն պարերով, շուրջ մեկուկէս ժամ տեւողութեամբ հմայեց հանդիսատեսը:

Առաջին բաժինով պարախումբը ներկայացուց հայկական պարեր՝ «Կիլիկիա», «Եարխուշտա» եւ «Քոչարի», յունական եւ հնդկական պարեր: Իսկ երկրորդ բաժինով հովիւներու պար, ռուսական պար, արժանի նեան թանկօ եւ հայկական պար՝ «Աւարայր»: Վերջինը գեղեցիկ բեմադրութեամբ, հոգեթով պար մըն էր:

Ելոյթի ընթացքին Յակոբ Այնթապեան հայկական ժողովրդական եւ ազգային երգերով առաւել ջերմացուց մթնոլորտը:

Ուշագրաւ էր նաեւ վերջին պարը, որուն մասնակցեցան բոլոր անդամները: Անոնք իրենց գունագեղ տարագներով հայկական գեղեցիկ ներդաշնակութիւն մը կազմած էին բեմահարթակին վրայ:

Աւարտին բեմ հրաւիրուեցաւ գեղարուեստական ղեկավար Վրեժ Թերգեան, որ ընդամենը երեք ամիսներու ընթացքին իր աչալուրջ ու հետեւողական մարզումներով յաջողեցաւ իրականացնել «Գեղարդ» պարախումբի այս հմայիչ ելոյթը:

Հանդիսութիւնը փակուեցաւ Հոգեշնորհ Տէր Թաթուլ Աբեղայ Գարտանաքեանի արտասանած «Պահպանիչ» աղօթքով:

Թղթակից

«Քրիստոսփոր» Գրադարանի Կազմակերպութեամբ Ուրուագրութեան Միջոց

Շաբաթ, 3 Փետրուար 2018-ի առաւօտեան ժամը 10:00-ն էր ու

թափուց Սարգիս Զեմպերճեան երկրորդական վարժարանէն, Հայ Աւե-



«Քրիստոսփոր» գրադարանի կազմակերպած միջոցարոցական ուղղագրութեան մրցումի ժամը հասած էր:

տարանական Բեթել Երկրորդական վարժարանէն, Չուարթնոց վարժարանէն, Մխիթարեան վարժարանէն



ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահի մուտքին հաւաքուած էին փունջ մը

եւ Կիլիկեան ճեմարանէն: «Լեւոն Շանթ» սրահի մուտքին



աշակերտներ, իրենց ծնողներուն եւ ուսուցիչներուն հետ՝ անհամբեր

գետեղուած էր Ս. Մեսրոպ Մաշտոցի խորհրդաւոր պատկերը, իսկ սրա-



սպասելով բոլոր մասնակիցներուն ժամանումին: Անոնք եկած էին Հալէպի Ազգ. Միացեալ վարժարանէն, Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանէն, Կըր-

իզ յարդարուած էր գրադարանի ականական պատկերներով: Սրա-
Թղթակից
Շաբ.՝ 19 10